## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

*Նորին Սրբություն Ամենայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին.*

*Համահայկական ազգային-եկեղեցական ժողովը 1945 թ. հունիսի 22-ին ս. Էջմիածնի նախաթոռ Մայր Տաճարում գաղտնի քվեարկությամբ միաձայն Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին, որի մասին տեղեկացնում եմ Ձեզ:*

Համազգային եկեղեցական ժողովի նախագահ, Տանն Կիլիկիո կաթողիկոս
ԳԱՐԵԳԻՆ Ա

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ ՍՏԱՑՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ ԵՎ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

### ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ՈՂՋՈՒՅՆԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

*Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կառավարության անունից և անձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձեզ հայկական եկեղեցու բարձր պաշտոնում, որպես ղեկավար առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:*

*Համոզված եմ, որ Ձեր իմաստուն ղեկավարության ներքո Հայկական եկեղեցին նույնպիսի եռանդով, ինչպես Հայրենական մեծ պատերազմի տարիներում, կվճռի իր առաջ դրված պատասխանատու խնդիրները:*

*ՍՍՌ Միության Կառավարությունը ինձ հանձնարարել է որպես նվեր Ձեզ հանձնել մեկ հատ «ԶԻՍ—101» մարդատար ավտոմեքենա:*

*Մեծ հաճույքով կատարում եմ այդ այնքան հաճելի հանձնարարությունը:*

Ձեզ անկեղծորեն հարգող ՊՈԼՅԱՆՍԿԻ

## ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒՆ

*Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սովետական Միության Կառավարության և անձամբ Ձեզ մեր ընտրության և օծման առթիվ մատուցած շնորհավորանքի հանդեպ և ուղարկված նվերի համար:*

*Սովետական Կառավարության հոգատարությամբ վերածնված և ծաղկող Սովետական Հայաստանում վերածնվել է հայ եկեղեցին և հայ հավատացյալները լիակատար հիմք ունեն անսահման երախտապարտ լինելու Սովետական Կառավարության և նրա ղեկավարին՝ Մեծ Ստալինին: Վերառաքում ենք մեր աղոթքները Բարձրյալին Սովետական Միության ծաղկման, նրա ղեկավարների և ամբողջ սովետական ժողովրդի երկար կյանքի համար:*

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս ԳԵՎՈՐԳ Զ

*Թ.* 244
30 *հունիսի* 1945 *թ.*